



ՎԵՑ ԱՄԻՍ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՍ 1)

(Ճանապարհորդական տպավորութիւններ)

Կարմիր բանակայինների երեխաներին օգնող հայ տիկիներին մի խոշոր կազմակերպութիւն գործում է Երուսաղեմում: Մեր այնտեղ եղած ժամանակ կազմակերպութեան անդամները թեւ էին ստացել ու Փուֆայիաներ էին գործում Ստալինգրադի երեխաների համար: Աշխատանքը սրահով և արագ կատարելու համար նրանք մրցում էին իրար մեջ:

Հայ տիկիներին այս կազմակերպութիւնը սերտ հարաբերութեան մեջ էր պտնջում տիկին Իրինայի հետ: Տիկին Իրինան ուսու հայրենասեր կին է: Նա ապրում է Եգիպտոսում, իսկ մեր ճանապարհորդութեան ժամանակ ամառանոց էր եկել Երուսաղեմ: Սա հանրաժանութիւն է: Տիկին Իրինային իր լալազույն երաժշտական գործերից մեկն է նվիրել ուսու մեծ երաժշտական վերդիսակին: Մենք եղանք տիկին Իրինայի մոտ: Նա շուրջը ձեռքին Փուֆայիա էր գործում:

— Ստալինգրադի երեխաների համար եմ գործում, — հայտնեց մեզ հպարտութեամբ:

Հիշում եմ, թե նա ինչպիսի հիացմունքով էր խոսում իր այն իրերի մասին, որոնց արտադրանքը ուսուական ծագում

ունեն: Ազնիվ հոգով տիպիկ ոտա կին է նա:

Ի դեպ, տիկին Իրինայի խորհուրդով մենք այցելեցինք Երուսաղեմի ուսուական այն տաճարը, որը կառուցված է ուսու ժողովրդական հերոս, մեծ իշխան Ալեքսանդր Նեմսկու անվամբ: Պատմում էին, որ Ստալինգրադի ծանր օրերին, տիկին Իրինայի հանձնարարութեամբ ուսու քահանաները ժողովրդական հերոս Ալեքսանդր Նեմսկու այս տաճարում պատարագ են մատուցել ուսուական զենքի հաջողութեան համար՝ ընդդէմ գերմանական Ֆաշիստներին: Նեմսկու տաճարը, ինչպես պարզվեց, կառուցվել է 1887 թվին:

Ճանապարհորդութեան ժամանակ մենք հանդիպեցինք բազմաթիւ հայ մասնագետների, որոնք մեծ անուն և համբաւ ունեցող մասնագետներ են՝ բժշկներ, գյուղատնտեսներ, ճարտարապետներ, երգիչներ, դերասաններ և այլ մասնագետներ: Այդ մասնագետների մեծ մասի հայացքները դեպի Սովետական Հայաստան են ուղղված: Ես հիշում եմ Կահիրեում երկու օրերոգներին — Արմինե Զաքարյանին և Գոհարիկ Սաչաւորյանին, որոնք աչքի ընկնող երգչուհիներ

1) Սկիզբը տես ամսագրին նախորդ համարում:

են, ելույթ են ունենում տեղական ռադիո-  
յում: Նրանք ջերմ հայրենասերներ են:

Մեր եղած հայկական որոշ դադուլթե-  
րում մինչև Հայրենական պատերազմը շատ



Օրիորդներ Արմեն Զաբարյանը և Գոհարիկ Պաշտոյանը  
առաջին շարքերում:

աղոտ պատկերացում են ունեցել Սովետա-  
կան Հայաստանի և ընդհանրապես Սովե-  
տական Միության տեխնիկայի, կուլտու-  
րայի և դիտուլթյա, դարգացման մասին:  
Հայրենական պատերազմը բաց է արել  
ներսնց աչքերը: Այժմ նրանք մեծ հափըշ-  
տակութամբ կարգում և լսում են այն ա-  
մենը, ինչպիսիք դրվում և խոսվում է Սովե-  
տական Հայաստանի մասին: Եվ դարմանա-  
լի չէ, որ երբ մենք մասնավոր խոսակցու-  
թյունների ժամանակ պատմում էինք Հա-  
յաստանի վերելքի մասին, նրա տեխնիկայի,  
գիտութայի և մշակույթի դարգացման մա-  
սին, մեր ունեղիղները մեծ հափշտակու-  
թյամբ լսում էին մեզ: Անհրաժեշտ ենք  
համարում բերել ամբողջ Երուսաղեմի մի  
հայ արհեստավորի՝ Հովսեփ Ծեմմասյանի  
երկտողը, որը նա գրել է իմ և իմ քնր-  
սուղարի անունով և մեզ հանձնել հուլիսի  
Գին, հասարակական իմ մի ելույթից ան-  
միջապես հետո: Նա իր երկտողում գրել է.

«Մանկութենէս մինչև այսօր, քառօրդ  
դարէ մը աւելի, շատ մը բեմերուն վրա-

յէն լսած էի իմ հայրենի երկրի անունը —  
դժբախտ, խեղճ, կարօտ և տխուր: Եւ  
միշտ, հուլիս, աչքէս արցունք կանճրեկէր:  
Փառք Աստուծոյ, իմ կեանքիս մէջ կղզամ  
այսօր միայն, օր մը երջանիկ 9 յուլիսի  
1944 թ.: Իմ հայրենիքի դեփիուղը ինձ կող-  
ջունէ ուրախ, ժպտուն և կայտառ:  
Հողիս ժպտաց և բիւր ծափերով ձեզ ող-  
ջունեց: Կարծես երկնքէն իջած գուլգ մը  
հրեշտակ ըլլայիք:

Յովսեփ Ծեմմասյան»:

Հ. Ծեմմասյանը մի ուրիշ անգամ ինձ  
բերեց իր ձեռքով պատրաստած երկու նովեր  
և մեկ ոտանավոր նվիրված Կարմիր Բա-  
նակին:

Գրեթե նույն բովանդակությամբ ար-  
տահայտեցին նաև Կահիրեի և Աղեքսան-  
դրիայի թեմական և քաղաքական անդամ-  
ներից ոմանք, երբ մեր եզիպտոս այցելելու  
կապակցությամբ գերապատիվ Տ. Մամբ  
րե սրբազանի նախաձեռնությամբ և զեկա-  
վարությամբ պաշտոնակարգ ժողով էր հրա-  
վիրված եգիպտոսում:

Սփյուռքի մեր հայության համար Սո- խարհապրական հասկացողություն չէ, այլ վեհական Հայաստանն այլևս սոսկ մի աշ- բարձր դիտություն, մշակույթ և տեխնի-



Կահիրեի և Աղեքսանդրիայի բևեռական և քաղաքական խորհուրդների համագումարը: Մեջտեղում կանգնած է գերազատիվ Տ. Մամբրե սրբազանը:

կա ունեցող առաջադեմ պետականություն: Բեյրութում հրատարակվող «Ջարթոնք» թերթը միանգամայն իրավացի իր սեպտեմբերի 17-ի առաջնորդող հոդվածում նկատել էր. «Այսօր երազ մը չէ այլևս հայրենիքը, ոչ ալ տիրապետան, այլ երկաթ, թրակոտր, ջրանցք, երկաթուղի, դպրոց, համալսարան, պետականութիւն, բանակ»:

Հնդկաստանից Երուսաղեմ սփորելու եկած մի լավ հայ երիտասարդ՝ Արամայիս Միրզոյանը, Սոփեոսական Հայաստանին նը վիրած իր մի ոտանախորի մեջ (որը հանձնեց ինձ Էջմիածին բերելու համար), հետևյալն է գրել.

«Սէկ Հիմարական բարձունքներից ու Գանդեսի սուրբ տփերից,

Ողջութիւններ ենք բերում քեզի հայ սարեգիր բեկորներից, Այսօր քո վերելքի, քո յարութեան տօնն ենք տօնում,

Սոփեոսական իմ Հայաստան, փառքիդ համբան նոր է բացվում»:

Հիմարայան բարձունքների վրա և Գանդեսի սրբազան տփերին տարագրված հայ երիտասարդը, ինչպես երևում է, պահաս հայրենասեր չէ, քան իր նախորդը՝ Հովսեփ Էմինը: Ժամանակները շատ են փոխվել և հայոց պատմության լավագույն դեմքերի երազները իրադրծվել են, մեր ժողովուրդն արդեն ունի իր անկախ, ազատ պետությունը Սոփեոսական Միության մեծ քնտանիքում:

Մերձավոր Արևելքի իմ ճանապարհորդության ժամանակ ես ստացել եմ բազմաթիվ ուղերձներ, նամակներ, ոտանախորներ, որոնց մեջ նրանց հեղինակներն առանձնապես իրենց հիացմունքն են հայտնում կարմիր Բանակի շարքերում մարտնչող հայ հերոսների, նրանց կատարած սխրագործությունները համար: Այդ նամակներից, ուղերձներից և ոտանախորներից անհրաժեշտ ենք համարում մի քանի հատվածներ բերել այստեղ:

Աղեքսանդրիայում մի ծերունի, Գա-

լաճյան ազգանունով, ինձ հանձնեց մի քանի ոտանավոր, որոնք նվիրված են Սովետական Հայաստանին և Կարմիր Բանակին: Այդ ոտանավորներից մեկում նա հերոս սավառնորդ Մտեփանյանից հետևյալն է խնդրում:—

«Ով դու սաւառնորդ, քաջ Մտեփանեան,  
Որ կը սաւառնես օդերու վերև,  
Թափէ շանթերդ կարկուտի նման...»

Իր մյուս ոտանավորի մեջ նա երկար կյանք է մաղթում Հայաստանը կերտողներին և հաստատութուն ցանկանում Մեծ Ռուսաստանին.

«Մեր փոքրիկ երկիր, այսչափ շուտ  
ծաղկիր,  
Յաւէտ թող ապրին դանի կերտողներ,  
Երկար դարերու մեր երազներն ելան,  
Անմահ թող ըլլայ Մեծն Ռուսաստան»:

Կահիրեում հրատարակվող «Սաւառնակ» շաբաթաթերթում բանաստեղծ Գրիգոր Համբրիկյանը տեղավորել է մի ոտանավոր, որի մեջ նա խնդրում է համբուրել բանակի հրամանատար Բաղդամյանին, և մյուս հերոսներին ու իրենց. «Հիացմունքը հայտնել նրանց:

«Ամէնուն կողմէ, կուռնի, չմոռնաս,  
Որունի հիացման ջերմ համբոյր մը տաս»:

Կահիրեից ինձ տրված ուղերձներից մեկում, որի հեղինակի անունն այժմ չեմ հիշում և ստորագրությունն անընթեռնելի է, հեղինակը խնդրում է. «Հայաստան վերադառնալիս բարև կտանէք մեր սիրելի եղբայրներին և քոյրերին և կասէք, որ կարդում ենք, «Սովետական Հայաստան» թերթում ձեր հերոսական գործերի մասին... ամբողջ աշխարհը տեսնում է, թե ինչպէս մեր փոքրիկ երկիրը շնորհիւ Սովետական Միութեան ժողովուրդների և մեծ, հանճարեղ և պաշտելի ՍՍԱԼԻՆԻ, կարճ ժամանակամիջոցում թոթափեց յետամացութեան փոշին»:

Ի դեպ, ընկեր ՍՍԱԼԻՆԻ անունը մեր հայ համայնքների, ինչպես և Մերձավոր

Արևելքի այլ ժողովուրդների շրջանում հերոսության, ազատության և փառքի սիմվոլ է: Ես հիշում եմ Հալեպի փոքրիկ մի երեխա, որի հայրը երբ պատվիրում էր նրան զոց (անգիր) ոտանավորն ասել, նա հպարտ պատիվ էր վերցնում և թոթովում՝

«Հերոս եմ ես, հերոս եմ ես,  
Փոքրիկ, փոքրիկ հերոս եմ ես,  
ՍՍԱԼԻՆ պապի թոռնիկն եմ ես»:

Ամեն տեղ, ուր մենք եղանք, ամեն հայ մարդ, որի հետ մենք խոսեցինք, չէր զավ մեկը, որ դովասանքով չխոսեր Կարմիր Բանակի քաջագործությունների մասին և իր հիացմունքը չհայտներ Կարմիր Բանակի մարտնչող հայ մարտիկներին սիրագործությունների առթիվ: Այդ տեսակետից բնորոշ է գերապատիվ Տ. Արատվազդ արբազանի ելույթը Բեյրութի առաջնորդաբանում հասարակական զանազան կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ. «Յարգանք մենք կը յիշենք մեր հայ եղբայրներուն դիւցազնական ոգորումները խորհրդային բանակներուն մէջ ի պաշտպանութիւն նուիրական հայրենիքին հասարակաց թշնամիներին, դէմ»:

Բնորոշ է նաև Բեյրութում հրատարակվող «Ժողովրդական ճայն» թերթի մեր առաքելության կապակցությամբ դրված առաջնորդող այդ հատվածը, որը վերաբերում է Միջուռքի հայության դերքին հանդեպ Սովետական Հայաստանի և նրա ռազմական ջանքերի: Միջուռքի հայությունը, — գրում է թերթը, — «Պատերազմի առաջին օրէն հե ի հե հետևեցաւ Սովետ Հայաստանի ռազմական ճիգին և աշխատեցաւ պտուտակ մըն ալ ինք անցնէ շինուող «Սասունցի Դաւիթ» թանկերուն»:

Եվ այդ պարտականությունը թերթը համարում է պանդուխտ որդու որդիական պարտականությունը իր հարազատ մոր հանդեպ: «Պանդուխտ որդին չի կրնար մոռնալ իր մայրը, չի կրնար չերգել»:

«Հայրենիք արբապան, լո՛ւ սիրուն աշխարհ, թուշում եմ դէպ քեզ հոգևովս անդադար»...

Մեր ժողովրդի դարաւոր երգն է ասի-  
կա: Արտասահմանի գրեթէ բոլոր թեր-  
թերը և ամառները, իրենց պատրաստ-  
կամութիւնն էին հայտնում օգնելու էջ-  
միտմանին նրա բոլոր պահանջները և ցանկո-  
թիւնները իրադրութիւն կյանքում: Երու-  
սաղիմում մեր եղած ժամանակ, Երուսա-  
ղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնա-  
կան օրդան «Սինո» ամսաթերթի խմբագիր  
հոգեւոր հոգեւոր Եղիշե վարդապետը, հայրենիքի  
կարտառով ապրող մի միտքան, մեր առաքե-  
լութան կատակցութեամբ իր դրած առաջ-  
նորդողում հայտարարում է.

«Էջմիածնէն և Հայաստանէն կուգան  
անոնք, և այս պարագան միայն կը բաւէ,  
որ բոլորը նման դարիպիմ, իրենց հեւքին  
մէջ սեղմած կարօտին անձուկը, իրենց հո-  
գիին աչքերովն ու նայուածքներովը թուին  
հարցնելու իրեն... «Ուստի՞ կու գաս, ծա-  
ռայ ենք ձայնիդ... մեր աշխարհէն խաբրիկ  
մը չունի՞ս»... սպասել իրեն սրտաւին,  
լսել զինք հաւատքով ու անխերապահօրէն

աջակցել անոր: Այս պէտք է ըլլայ բոլո-  
րիս փափաքն ու կամքը...»:

Վերին աստիճանի բարձր են դնահա-  
տում Սփյուռքի մեր հայերը Սրբազան տե-  
ղակալ գերապատիւ Տ. Գեորգի արքեպիս-  
կոպոս Չորեքչյանի հայրենասիրական ձեռ-  
նարկումները Հայրենական պատերազմի  
օրերին: Նա իրավացիորեն հայ եկեղեցու  
պատմութեան խոշոր գեմքերից մեկն է  
ճանաչվում: Գերապատիւ Արտաշատը սըր-  
բազանն իր ուղերձում հետևյալն է խնդրել  
ինձ. «Էր ինդրեմ, որ բարի ըլլաք անդամ  
մը ևս յանուն իմ հոգեսէր և աղջատէր ժո-  
ղովրդին յայտնել իմ անհուն հիացմունքը  
բարձրաչնոր հարգանքս Սրբազան Տեղակալին, որ  
գրեթէ ստանձինն դիտցաւ Մայր Աթոս  
Սուրբ Էջմիածնի հոգևոր և մտաւոր մերա-  
կառուցման խոհական ճարտարապետ դառ-  
նալ, իր անդնահատելի նախաձեռնութիւ-  
նովը և այնքան կարճ ժամանակի մէջ նա  
խաձեռնութիւններ սկսած «Մասունցի Դա-  
ւիթ» հրատարակչին զորասիւնի համազգային  
հանդանակութեան»:

ՊՐՈՑ. ԴՈՒՏ. Ա. ԱՐԲՆԱՄԵՆ

